


# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

*Posted on October 18, 2020 by Keghart*



Category: [Opinions](#)



**Սոյն գրութիւնը ստացեր էինք Սեպտեմբեր 27-ին սկսած Ազրայեճանա-թրքական նախայարձակումէն առաջ: Թէեւ անմիջականօրէն չ'առնչուիր ներկայիս ընթացող ռազմական գործողութիւններուն հետ, բայց նկատի առնելով գրութեան հայրենասիրական ոգին եւ հայրենիքին անսակարկ ծառայելու պատրաստակամութիւնը՝ յարմար գտանք յանձնել մեր ընթերցողներու ուշադրութեան: Խմբ.**

**Ալէքս Մարտիրոսեան**, Թորոնթօ-Երեւան, 10 Յուլիս 2020

Այն ինչ որ Հայոց պատմութեան դասերուս սորված ու ազգային (անցեալի) կուսակցական եւ մշակութային կեանքին մէջ փորձառկած եմ Գանատա, Նոյն ատեն քաջածանօթ ըլլալով Խորհրդային մարդու մտայնութեան ու հոգեբանութեան, հոս ապրիլը սակայն, բոլորովին ուրիշ փորձառութիւն էր:

Սփիւռքի մեր տաքուկ ու ճոխ պայմաններու մէջ ապրելով, նստիլ ու հեռուէն թելադրանքներ կատարել, առաջարկներ կամ պահանջքներ ներկայացնելը երբեմն հաւասար է Մարի Անթուանեթին ըսած. «Հաց չունին՝ թող կարկանդակ ուտեն...» խօսքին:

Կ'ուզեմ իմ փորձառութիւնս կիսել ԳԵՂԱՐԴ-ի ընթերցողներու հետ, որքան որ խմբագրութիւնը յարմար նկատե հրատարակել զանոնք որպէս տեսակետ:

Մնացէք առողջ ու կենսուրախ:

Շնորհակալութեամբ՝

Ա. Մ.

\*\*\*

Է՛ր ժամանակին, երբ ես Մխիթարեան մայրավանք՝ Ս. Ղազարի «Նորընծայ» էի, ապա «Վարժարան» փոխադրուելէս ետք, առօրեայ մեր խօսակցական Հայերէն լեզուն այնքա՛ն էր բիւրեղ, որ ետքէն «Աշխարհ» վերադարձիս՝ Սուրիա, Լիբանան, Գանատա, կարօտով կը փնտռէի «Մխիթարեանցի», «Մելգոնեանցի», «Հայկազեանցի», «Ժառանգաւորաց» եւ այլ բարձրորակ «Ճեմարաններէն» շրջանավարտի մը, որ լաւ մակարդակի Հայերէնի կարօտս յագեցնէի:

Նոյն ատեն հաւատացած էի, որ միայն Հայրենի հողին վրայ կարելի է ինքնուրոյն մշակոյթ մը ծաղկուն պահել, իր լեզուական ու իմացական շարժումներով:

Հայրենիքէն հեռու ապրիլը, թէկուզ հարիւրաւոր տարիներու հարուստ ու կազմակերպ միջավայրի մը մէջ, ինչպէս եղած են Թրանսիլվանիոյ եւ Հնդկաստանի գաղութները, պատմութիւնը փաստած է անխուսափելին, որ օտար մշակոյթներու ծովուն մէջ պտղունձ մը ադի նման ձուլուած ենք ...:

1915-1923 արհաւիրքի տարիներուն, երբ հիւժած հայ մայրը Տեր 2րդի անապատի անազին վրայ շարունակած էր Հայերէն սորվեցնել իր սովահար զակին, այդ ոգին ու անանդը փոխանցուեցաւ մինչեւ մեր սերունդին՝ «հայապահպանում» կարգախօսի տակ:

80-ականներուն, լուսահոգի Գարեգին Ա. Կաթողիկոսը եկաւ յուշելու մեզ, որ մշակոյթն ու լեզուն «պահածոյ» կերակուր չեն, պետք է դադրինք կրաւորական «հայապահպանում» յորջորջելէ, այլ՝ ձգտիլ «ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄ» նշանաբանին:

Կարդալով ԳԵՂԱՐԴ-ի վերջին թիւը, «Այս ընթացքով դեպի ու՞ր», «Դասական ուղղագրութեան վերականգնում», «Ստորագրահաւաք՝ Փրկենք Հայերէնը», այս բոլորը եւ անելին, սրտիս շատ մօտ ըլլալուն, հաստատ՝ ե՛ս ալ պիտի ձայնակցեի գրելով Թորոնթոյէն:

Սակայն, Հայաստանը որպէս բացարձակ ներշնչման աղբիւր ու տասնեակ հազարամեակներու հայութեան բնօրրանը համարելով, որոշեցի ինձի պարտադրուած արտորեալ կեանքիս վերջ դնել, երթալ ու շաղկապուիլ Հայաստանի եւ Արցախի իրականութեան, բայց ոչ՝ որպէս գբօսաշրջիկ, այլ իմ պապենական Հայրենիքէ ճակատագրի բերումով հեռացուած եւ «Օտար ամայի ճամփեքի վրայ» ման եկող հայորդի ...:

2018թ. Մարտին, «Թաւշեայ յեղափոխութեան» ոտնաձայնն առնելով, ես ալ «քայլ առի ու մերժեցի Սերժին»՝ մաս կազմելով ծովածավալ Երեւանի հայութեան ալիքներու մէջ, ապրելով իմ հայ կեանքիս ամենէն հպարտ ու ամենէն երջանիկ օրերը ...:

Ուզեցի իմ ձայնս ալ հասցնել ամբողջ աշխարհին, երբ միասնաբար բացականչեցինք. «ՄԵՆՔ ԵՆՔ ՏԵՐԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ», այլեւս, չպատկանելով որեւէ կուսակցութեան կամ յարանուանութեան, չուզելով հաւատալ ո՛չ ասոր եւ ալ ո՛չ ալ միւսին: Ուսապարկը մէջքիս շրջեցի սահմանամերձ գիւղերով ու գացի Արցախ:

Հիւրը եղայ աղքատ գիւղացի ընտանիքներու, անդամալոյծ ու վիրաւոր մարտական տղոց՝ «Ապրիլեան քառօրեայի» կամաւորներուն, գիշերներ անցուցի իրենց կիսափուլ հիւղակներուն մէջ, քնապարկս չոր գետնին փռած, քնացայ աստեղազարդ երկնքի տակ, «զարթնեցի» արքադադի կանչով ու նախաճաշեցի տատիկի նոր թխած թոնրի լավաշն ու նոր սարքած թարմ պանիրը:

Պատահեցաւ, որ այս կամ այն բարբառը չհասկնամ, երբեմն ալ իրենք չիմացան թէ «ինչ եմ փորձում ասել» իրենց, սակայն վերջաւորութեան մէկ բան ունեինք որպէս ընդհանուր յայտարար, այն ալ

Մկրտիչ Պեշիկթաշեանի բանաստեղծութեան պատգամը.

«ՏՈ՛ՒՐ ԻՆՁ ՔՈ ՁԵՈՔ,  
ԵՂԱՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ,

**ՈՐ ՄՐԿԱՒ ԷՆԵՐ ՉԱՏՈՒՄ»:**

Այսօր թեև մեր՝ այսպես կոչուած անկախութեան 29 տարիներ են անցած, սակայն շարք մը պատասխանատու «ղեկավարներ»՝ ոչ միայն տիրութիւն չեն ըրած մեր երկրին ու ժողովրդին, այլ որպէս գործակալ, ծառայած են մեր յայտնի ու անյայտ թշնամիներուն:

Կողոպտած են մեր երկիրը, անդամալուծած մեր պետականութեան ենթակառոյցները, վաճառած են մեր հայրենիքի ընթերքի հարստութիւնները՝ ստեղծելով բնապահպանական անբուժելի վնասներ եւ ես աչքերովս տեսած ու ականջալուր եմ եղած՝ անմեղ հայորդիներու ողբերգական վիճակն ու տխուր վկայութիւնները լսելով ...:

Ով որ ճարպիկ էր, «մորթը» փրկած, թողած ու հեռացած է Հայաստանէն ...:

Ժողովրդի բոլոր խաւերուն հետ իմ ունեցած շփումներուս ընթացքին եղան օրեր, երբ վերադարձայ իմ կացարանս, չկարողացայ կուլ տալ յանապազօրեայ պատառ մը հացը ...: Յուզմունքը յաճախ խեղդեց զիս եւ ընդվզումը փախցուց իմ քունս, միաժամանակ պարտադրելով ինձի խոր յարգանք ու սեր տածել իրենց հաւատքի եւ ամրութեան, մեր պուճուր մը հողին ու հայրենիքին կարչած մնալու վճռականութեան՝ ուժ տալով նաեւ ինձի, որ մաս կազմեմ ՀԱՅՐԵՆԻՔԻ վերակառուցման գործընթացին, բոլոր իմ կարելիութիւններով ու առանց սակարկութեան ...:

Շարունակելի ...

**There are no comments yet.**